ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

**2025**

ՏԱՎՈՒՇ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ԹԵՍՏ 2**

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

**1** **Ո՞ր գիտությունն է համալիր կերպով ուսումնասիրում երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով :**

1) լանդշաֆտագիտությունը
2) երկրագրությունը
3) քարտեզագրությունը
4) երկրաբանությունը

**2** **Ստորև բնութագրումով ո՞ր մեթոդին է վերաբերում:**

*Քանակական մեթոդներից մեկն է: Այն առավել լայն կիրառում ունի հատկապես հասարակական աշխարհագրության մեջ: Նրա հիմնական նպատակը քանակական էլակետային տվյալների հավաքումը, մշակումը և վերլուծությունն է: Ո՞ր մեթոդն է.*

1) օդատիեզերական
2) մաթեմատիկական
3) վիճակագրական
4) քարտեզագրական

**3** **Ստորև թվարկված ուղղություններից ո՞րն է համապատասխանում 45° ազիմուտին:**

1) հյուսիս-արևմուտք
2) հարավ-արևելք
3) հարավ-արևմուտք
4) հյուսիս-արևելք

**4** **Ստորև թվարկված մասշտաբներից որո՞նք են համապատասխանում միջին մասշտաբի քարտեզներին:**

1) 1 : 1000 000 — 1 : 2000 000
2) 1 : 10 000 — 1 : 200 000
3) 1 : 200 000 — 1 : 1000 000
4) 1 : 50 000 — 1 : 100 000

**5** **Ստորև թվարկվածներից ո՞րն է համարվում նստվածքային օրգանական ծագման ապար:**

1) տորֆ
2) կավ
3) ավազ
4) տուֆ

**6** **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Ծովային հոսանքները շարժման գծերով են պատկերվում քարտեզի վրա:
2) Մերձբևեռային լայնությունները քարտեզագրելու համար օգտագործում են գլանային պրոյեկցիան:
3) Աղավաղումների բնույթով պայմանավորված քարտեզագրական պրոյեկցիաները՝ լինում են հավասարամեծ, հավասարանկյուն և ազատ:
4) Որակական ֆոնի կիրառման դեպքում պատկերվող տարածքի տարբեր մասեր ներկվում են տարբեր գույներով, կամ ներկվում են ըստ որևէ հատկանիշի:

**7** **Ո՞ր ժամանակաշրջանին է համապատասխանում անթրոպոգեն փուլը:**

1) կայնոզոյան
2) պալեոզոյան
3) մեզոզոյան
4) պրոտերոզոյան

**8** **Ինչպիսի՞ արագությամբ է Հարավային Ամերիկան հեռանում Աֆրիկայից:**

1) 9-10 սմ/տարի
2) 1-2 սմ/տարի
3) 3-4 սմ/տարի
4) 7-8 սմ/տարի

**9** **Ուսումնասիրությունների համաձայն երկրագունդը տարեկան մոտավորապես որքա՞ն ջուր է կորցնում:**

1) 0,5 կմ$^3$
2) 0,1 կմ$^3$
3) 0,2 կմ$^3$
4) 0,3 կմ$^3$

**10** **Մթնոլորտի ձևավորման անթթվածնային փուլի ժամանակ ո՞ր գազի քանակն է գերազանցել 90%-ը:**

1) օզոն
2) ջրային գոլորշի
3) ազոտ
4) ածխաթթու գազ

**11** Ո՞ր դարաշրջանում են առաջացել ծվածին կաթնասունները:

1) Պրոտերոզոյան
2) Արխեյան
3) Կայնոզոյան
4) Պալեոզոյան

**12** Ո՞ր դարաշրջանում է ցամաքում ձևավորվել հողային ծածկույթը.

1) Պրոտերոզոյան
2) Արխեյան
3) Կայնոզոյան
4) Պալեոզոյան

**13** Ո՞ր աստիճանի ջուրն է ամենախիտը:

1) +7˚C
2) +4˚C
3) +5˚C
4) +6˚C

**14** Ո՞ր զոնայում է մարդը մեծամասամբ զբաղվում ձկնորսությամբ և եղջերվապահությամբ:

1) սավաննա
2) տունդրա
3) տայգա
4) անապատ

**15** Ո՞ր զոնայում են մեծամասամբ գերակշռում սևահողերը:

1) սավանա
2) տունդրա
3) տափաստան
4) անապատ

**16** Ո՞ր նեղուցով են բաժանվում իրարից Աֆրիկան ու Եվրոպան:

1) ԼաՄանշի
2) Մոզամբիկի
3) Ջիբրալթարի
4) Մալակկայի

**17** **Ո՞ր թերակղզին է Աֆրիկայում:**

1) Սոմալի
2) Ապենինյան
3) Ֆլորիդայի
4) Առնհեմլենդ

**18** **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ավստրալիայի ամենախոշոր գետը Օբն է:
2) Ավստրալիան չունի արտեզյան ավազան:
3) Ավստրալիան ամենաչոր մայրցամաքն է:
4) Ավստրալիան հարուստ է լճերով:

**19** **Ո՞ր լեռնազագաթն է գտնվում Անտարկտիդայում:**

1) Կիլիմանջարո
2) Վինսոն
3) Կոսցյուշկո
4) Մոնբլան

**20** **Ո՞ր ջրվեժն է Հարավային Ամերիկայում:**

1) Անխել
2) Լիվինգստոն
3) Վիկտորիա
4) Նիագարա

**21** **Ո՞ր կենդանին է ապրում Հյուսիսային Ամերիկայում:**

1) բադակտուց
2) լամա
3) կենգուրու
4) բիզոն

**22** **Ո՞ր հրաբուխը *չի* գտնվում Եվրասիայում:**

1) Կրակատաու
2) Էտնա
3) Օրիսաբա
4) Հեկլա

**23** **Ո՞ր դաշտավայրը *չի* գտնվում Եվրասիայում:**

1) Թուրանի
2) Մեկոնգի
3) Միջագետքի
4) Օրինոկոյի

**24** **Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է *սխալ*.**

1) Անտարկտիկայի ջրերը մտնում են Ավստրալիայի տնտեսական գոտու մեջ:
2) Ինքնիշխան պետությունը քաղաքականորեն կազմակերպված տարածք է, որը կառավարվում է դրա վրա ձևավորված ինքնիշխան կառավարության կողմից և ճանաչված է միջազգային հանրության մեծ մասի կողմից:
3) Պետական սահմանը կարող է լինել լեռնագրական, եթե անցկացված է լեռների ջրբաժաններով կամ գետերի հունով:
4) Պետական սահմանը կոչվում է աշխարհագրական, եթե անցնում է միջօրեականով կամ զուգահեռականով:

**25** **Ո՞րը միգրացիայի տեսակ *չէ*:**

1) քաղաքական
2) մշտական
3) ժամանակավոր
4) սեզոնային

**26** **Ո՞ր ռասայի ներկայացուցիչներն են առանձնանում սև, կոշտ և ուղիղ մազերով, մաշկի դեղնավուն գույնով, տափակ դեմքով, խիստ արտահայտված այտոսկրերով, աչքի նեղ բացվածքով և վերին կոպի խիստ զարգացած ծալքով:**

1) նեգրոիդ
2) ավստրալոիդ
3) եվրոպեոիդ
4) մոնղոլոիդ

**27** **Ո՞ր քաղաքը *չի* մտնում Հռենոս-Ռուր քաղաքային խոշոր կուտակման մեջ:**

1) Դրեզդեն
2) Դյուսելդորֆ
3) Դորտմունդ
4) Դույսբուրգ

**28** **Ո՞ր ռեսուրսն է համարվում վերականգնվող:**

1) արեգակնային էներգիա
2) երկաթաքար
3) քամու էներգիա
4) անտառափայտ

**29** **Աշխատանքի ո՞ր բաժանման ժամանակ են երկրները մասնագիտանում որևէ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման բնագավառում և համաշխարհային շուկայում դրանց արդյունքի փոխանակման մեջ:**

1) միջազգային
2) աշխարհագրական
3) հասարակական
4) միջշրջանային

**30** **Ո՞ր երկիրը չի համարվում առաջատար համաշխարհային ածխարդյունաբերության մեջ:**

1) Ռուսաստան
2) Չինաստան
3) Հնդկաստան
4) Վրաստան

**31** **Ինչո՞վ պայմանավորված *չէ* սև մետաղաձուլության մեջ զարգացող երկրների բաժնի մեծացումը:**

1) գիտական կենտրոնների առատությունը
2) այդ երկրների վառելիքաէներգետիկ հարուստ պաշարները
3) սպառման ծավալների աճը
4) էկոլոգիապես վնասակար արտադրությունները դուրս բերելու և զարգացող երկրներ փոխադրելու միտումը

**32** **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն ունի ելք դեպի ծով:**

1) Ռումինիա
2) Չեխիա
3) Սլովակիա
4) Մոլդովա

**33** **Արևելյան Եվրոպայի ո՞ր երկիրն է առաջատար վարդի յուղի արտադրությամբ:**

1) Բելոռուս
2) Հունգարիա
3) Լեհաստան
4) Բուլղարիա

**34** **Ստորև թվարկվածներից ո՞րն է երկրամաս:**

1) Դաղստան
2) Սախա
3) Խաբարովսկ
4) Չեչնիա

**35** **Ստորև թվարկվածներից ո՞ր թերակղզին Հարավային Եվրոպայում չէ:**

1) Պիրենեյան
2) Բալկանյան
3) Ապենինյան
4) Յուկատան

**36** **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրի նավատորմիղն է գտնվում աշխարհի առաջին տասնյակում:**

1) Սլովենիա
2) Լեհաստան
3) Հունաստան
4) Չեռնոգորիա

**37** **Ստորև թվարկվածներից ո՞ր երկիրը *չի* համարվում Բենիլյուքսի երկիր:**

1) Լյուքսեմբուրգ
2) Բելգիա
3) Նիդեռլանդներ
4) Դանիա

**38** **Ստորև թվարկվածներից ո՞ր երկրում է կյանքի միջին տևողությունը մոտավորապես 82 տարի:**

1) Նամիբիա
2) Նորվեգիա
3) Նիգերիա
4) Նիկարագուա

**39** **Քարտեզ 1-ում ո՞ր երկիրն է նշված Դ տառով:**

1) Քուվեյթ
2) Հորդանան
3) Իրաք
4) Լիբանան




**Քարտեզ 1**

**40** **Քարտեզ 1-ում ո՞ր մայրաքաղաքն է նշված Ը տառով:**

1) Մասկատ
2) Թբիլիսի
3) Անկարա
4) Թեհրան

| 41 |
|---|

**Քարտեզ 2-ում Ա տառով ո՞ր լեռնաշղթան է նշված:**

1) Գեղամա
2) Վարդենիսի
3) Զանգեզուրի
4) Արեգունու

| 42 |
|---|

**Քարտեզ 2-ում Գ տառով ո՞ր մարզն է նշված:**

1) Կոտայքի
2) Արարատի
3) Վայոց ձորի
4) Արմավիրի




**Քարտեզ 2**

**43** **Ո՞ր լեռնազագաթը *չի* գտնվում Սասնա լեռներում:**

1) Ջիլո
2) Ծովասար
3) Անդոկ
4) Մարութա

**44** **Ե՞րբ փլուզվեց ԽՍՀՄ-ը:**

1) 1991թ
2) 1988թ
3) 1989թ
4) 1990թ

**45** **Ո՞ր հանքավայրում կա նեֆելինային սիենիտ:**

1) Կապուտան
2) Սվարանց
3) Շվանիձոր
4) Հրազդան

**46** **Ո՞ր բնակավավայրում է դիտվել ամենացածր ջերմաստիճանը:**

1) Վարդենիս
2) Պաղակն
3) Մարտունի
4) Ախուրյան

**47** **Ո՞ր կլիմայական գոտում են թափվում ամենաշատ տեղումները:**

1) Ձյունամերձ լեռնային
2) Չոր ցամաքային
3) Բարեխառն լեռնային
4) Ցուրտ լեռնային

**48** **Ո՞ր գետն է սկիզբ առնում Արագածի ու Փամբակի լանջերից:**

1) Վեդի
2) Քասաղ
3) Ազատ
4) Ողջի

**49** **Ո՞ր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներն են ապրում Լոռու մարզի Լերմոնտովո և Մեղովկա բնակավայրերում:**

1) ասորիներ
2) հույներ
3) ռուսներ
4) եզդիներ

**50** **ՀՀ ո՞ր քաղաքն է գտնվում Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում:**

1) Նոյեմբերյան
2) Սպիտակ
3) Ստեփանավան
4) Վանաձոր

**51** **Ո՞ր երկրներն են աղքատ ջրաէներգետիկ ռեսուրսներով:**

1) Վրաստանը և Նորվեգիան
2) Կանադան և Տաջիկստանը
3) Սաուդյան Արաբիան և Չադը
4) Ռուսաստանը և Բրազիլիան

**52** **Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.**

1) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը
2) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը
3) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը
4) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը

**53** **Ո՞ր երկիրն է առավել քիչ անտառապատ.**

1) Իրան
2) Ռուսաստան
3) Ինդոնեզիա
4) Կանադա

**54** **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) կոնյակի արտադրությունը
2) սարքաշինությունը
3) պղնձաձուլությունը
4) կարի արտադրությունը

**55** Տրվածներից ո՞րը էրոզիայի առաջացման պատճառ *չէ:*

1) գետերի վարարումները:
2) անտառային տարածքների կրճատումը
3) խախտված հողերի վերականգնումը
4) արոտավայրերի գերարածեցումը

**56** Գրել այն երկրների համարները, որոնք մտնում են աշխարհի առաջին տասնյակի մեջ մեքենաշինության զարգացվածությամբ:

1) Ճապոնիա
2) Չինաստան
3) Իրաք
4) Գերմանիա
5) Ղազախստան
6) Աֆղանստան
7) Բանգլադեշ
8) Հնդկաստան

**57** Գրել այն երկրների համարները, որոնք կոշկեղենի գլխավոր արտադրողներն են:

1) Իսպանիա
2) Չինաստան
3) Իտալիա
4) Գերմանիա
5) Ինդոնեզիա
6) Ուզբեկստան
7) Տաջիկստան
8) Հնդկաստան

**58** Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք հարուստ են վարելահողերով:

1) Դանիա
2) Չինաստան
3) Իրան
4) Կանադա
5) Ղրղզստան
6) Պակիստան
7) ԱՄՆ
8) Հնդկաստան

**59** Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են կարտոֆիլի համախառն բերքով:

1) Կոնգո
2) Չինաստան
3) Օման
4) Արգենտինա
5) Վրաստան
6) Ռուսաստան
7) ԱՄՆ
8) Հնդկաստան

**60** Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են սուրճի արտադրությամբ:

1) Եթովպիա
2) Բրազիլիա
3) Կոլումբիա
4) Կանադա
5) Ինդոնեզիա
6) Պակիստան
7) ԱՄԷ
8) Զամբիա

**61** Գրել այն գերխոշոր երկրների համարները, որոնք առաջատար են խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով:

1) Բելգիա
2) Չինաստան
3) Բրազիլիա
4) Շվեդիա
5) ՀԱՀ
6) Եգիպտոս
7) ԱՄՆ
8) Հնդկաստան

**62** Տրված տարածաշրջանները դասավորել բնակչության թվաքանակի նվազման կարգով՝ 2022թ տվյալներով:

1) Արևմտյան Եվրոպա
2) Արևելյան Ասիա
3) Հարավային Ասիա
4) Հյուսիսային Եվրոպա

**63** Տրված ԱՄՆ նահանգները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ:

1) Տեխաս
2) Կալիֆորնիա
3) Ֆլորիդա
4) Արիզոնա

**64** Որոշել միևնույն միջօրեկանի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը, եթե դրանցից մեկը հս.լ.11°-ի վրա է, իսկ մյուսը՝ հվ.լ.10°-ի:

**65** Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս.լ.29˚ և արլ.ե. 115˚: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը մարտի 21-ի կեսօրին:

**66** Օդի հարաբերական խոնավությունը 24 գ/սմ$^3$ է, իսկ օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 60 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:

**67** Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե այնտեղ ընդհանրապես ապրում է 90 մլն. մարդ, իսկ կոնկրետ գյուղերում՝ 18 մլն. մարդ:

**68** **Որքա՞ն է երկրի բնակչության տարեկան բացարձակ մահացությունը, եթե այնտեղ ապրում է 3 մլն մարդ, իսկ մահացության ցուցանիշը 6‰ է:**

**69** **Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ:**

1) Ռուրը աշխարհի խոշորագույն նավթային ավազաններից է:
2) Արդյունաբերության մեջ մեծ տեղ են գրավում էլեկտրաէներգետիկան, մեքենաշինությունը և քիմիական արդյունաբերությունը:
3) Շատ խիտ է բնակեցված Հյուսիսգերմանական դաշտավայրը:
4) Գերմանիան աշխարհի առավել քաղաքայնացված երկրներից է:
5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
6) Այստեղ է ձևավորվել Եվրոպայի ամենահզոր տրանսպորտային համակարգը:

**70** **ՀՀ մարզերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ:**

1) Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքը հայտնի է գարեջրի արտադրությամբ:
2) Արագածոտնում է Մաստարայի սելավային գետակը:
3) Արմավիրի մարզի լեռնաշղթաներից են Ուրծը և Երանոսը:
4) Արարատի մարզում է Շամիրամի լավային սարավանդը:
5) Շիրակի մարզի գերխոշոր գյուղերն են Ախուրյանը և Ազատանը:
6) Լոռու մարզում է Շամլուղի պղնձահանքը: